

<https://doi.org/10.52027/18294685-fba2024.1>

ԱՐԲԱՆԱՄԵԱՆ ՔՆԱՐԻԿ

Խ. Արովեանի անուան հայկական պետական
մանկավարժական համալսարան

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆԵԱՆԻ «ՀԱՅՐԱԿԱՆ» ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ «ՀԱՅՐԸ» ՀԱՏՈՐԻ)

Բանալի բառեր՝ Ֆելիքս Բախչինեան, «Հայրը», միջտեքստային դրսևորումներ, խորհրդանիշ, երկխոսություն, ընթերցում, ապամիֆականացում, սերունդների բախում, հայրական մոդել:

Keywords: Felix Bakhchinyan, “Father”, intertextual manifestations, symbol, dialogue, reading, demystification, clash of generations, paternal model.

Տեսնես ի՞նչ մտածումների ու նորաբանությունների կը հանդիպես, ի՞նչ նոր գրական ու մշակութային խաչմերուկներում կը յայտնուես հերթական նոր գիրքը բացելիս: Այսպիսի հարցականների առջև է կանգնում Ֆելիքս Բախչինեանի հաւատարիմ կամ հետետղական ընթերցողը: Այս սպասումն է թերեւս կարելորդ ընթերցողի համար, որին այս անգամ՝ քննութեան ենթակայ «Հայրը» վեպում (սա հեղինակային ժանրային բնորոշումն է) կարծես թէ որոշել է «հաշուի չառնել» հեղինակը, թեպէտ իրեն «այդպէս չեն դաստիարակել. ես միշտ պէտք է հաշուի առնեմ «ինչ կ'ասեն»ը», որը տարիների հեռուից համարում է «բարդոյթների գերեզմանոց» [Բախչինեան, 2023, 4-5], ուր գուցէ եւ թաղուած են եղել իր գլուխգործոցները: Ու անմիջապէս օգնութեան են կանչում մեծ նախորդները՝ «սխրալի» Չարենցն ու նրան այդպէս բնորոշողը՝ Վահան Թէքէեանը, որ Ֆ. Բախչինեանի ուղեկից արուեստագէտն է (յիշենք թէկուզ միայն «Վերջին մանկություն» վիպակը): Այդպէս նրան յաճախակի օգնութեան է գալիս եւ Վարուժանը, որի մասին դատողությունների շարքը երբեմն վերածում է փոքրիկ վերլուծութեան, որը մի դէպքում կարելի է «շեղում» դիտել, միւս պարագային, սակայն, միաձուլում բնագրին, ինչն օգնում է սիւժետային տարրի ամբողջացմանը [Բախչինեան, 2023, 65-68]: Նմանատիպ միջտեքստային դրսևորումները, ի դէպ, ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային հեղինակների հետ (Հումբրոս, Ռոմէն Ռոլան, Ժան Ժիոնո, Ռեյ Բրեդբերի, Էյժեն Վեվերիս), յաճախադէպ են Բախչինեանի բնագրերում («D'jà Vu. Հալէպ՝ սիրոյ եւ մահուան հովիտ», «Մի գիշեր Աթաթուրքի սենեակում» եւ ուրիշներ) եւ ըստ էութեան՝ մէկ այլ խօսակցութեան նիւթ: Եւ սա բոլորովին էլ չի նշանակում, թէ հեղինակը ուղիղ իմաստով «ապաւինում է» այդ արուեստագէտներին: Այս առումով մենք համակարծիք ենք գրականագէտ, տեսաբան Թոմաս Ֆոսթերի հետ, թէ «Այս ինտերտեքստուալ երկխոսությունը խորացնում ու հարստացնում է ընթերցանութեան փորձը՝ տեքստին հաղորդելով իմաստային բազմաթիւ շերտեր, որոնցից մի քանիսն ընթերցողները նոյնիսկ չեն նկատել» [Ֆոսթեր, 2021, 24]: Իսկ եթէ այս երկխոսութեան մէջ «նմանություններ ու համապատասխանություններ ենք նկատում», «գիրն աշխուժանում է» [Նոյն տեղում]:

Չնայած ստեղծագործութեան անմիջապէս մուտքին հնչող «բարդոյթների» շարանին, ընթերցողը պիտի այնքան էլ հաւատ չընծայի հեղինակային տարակոյսներին, քանի որ քիչ անց հնչում է գրեթէ հակադիր միտքը. «Ես գրող եմ, ունեմ նաեւ կիկլոպեան աչք...» [Բախչի-

նեան, 2023, 7], այսինքն՝ կարողանում է կարդալ այն, ինչ դժուարընթեռնելի է սովորական մարդկանց համար:

Ֆելիքս Բախչինեանի գրականությունն ընթերցելիս, եւ սա վերաբերում է ոչ միայն քննութեան ենթակա «Հայրը» երկին, անընդհատ խորհրդանիշների փնտրտուք եւ ունենում: Սովորաբար գրողն ինքը աւելի շատ է տեղեակ իր խորհրդանիշներից, քան ընթերցողը: Բախչինեանի ստեղծագործութեան պարագայում, սակայն, երկու կողմն էլ «շահառու» են: «Ես մտնում եմ խոր գետը՝ լողալ չիմանալով... Խոր գետերը անաղմուկ են հոսում ու անաղմուկ էլ տանում են... Այլաբանությունները ստացւում են ինքնաբերաբար: Գետը... ի՛նչ հզօր, ի՛նչ ահասարսուռ գեղեցիկ խորհրդանիշ է» [Բախչինեան, 2023, 5], - յայտարարում է հեղինակն ու աւելացնում գետին վերագրուող անհաշուելի խորհրդանիշներին իր իմացածը: Աւելին, առաջ ընկնելով նկատենք նաեւ, որ «ահասարսուռ» այս խորհրդանիշին գալիս է միանալու «ջրափոսը», որ կեանքի դասերի մի ամբողջ խորհրդանշային համակարգ է ներկայացնում:

Խորհրդանիշներից մէկն էլ, օրինակ, Սուրբգրային ու դիցաբանական պատումներից մինչեւ այս պատումում հանգրուանած այգին է, «որ ի վերջոյ հենց կեանքն է» (սա կարծես նորություն չէ գրականութեան համար), որի զարկերակն անպայման ուզում է զգալ հեղինակը: Հակառակը անտարբերությունն է, որ իր՝ արուեստագէտի համար կարող է համազօր լինել մահուան, իսկ այս հասողութեանը ինքը եկել է իր համար այնքան կարեւոր հայրական ճանապարհով. «Հայրս ասում էր՝ անտարբերությունը յանցագործություն չէ, մահ է: Ստուգում եմ՝ հո՞ չեմ մեռել» [Բախչինեան, 2023, 9]:

Առհասարակ այս «կիկլոպեան աչքը» շրջապատի կողքին հակուած է նաեւ ինքնաքննութեան, որտեղ ակնյայտ է հեզմանքը: «Այդ օրը իսկապէս բացառիկ էր, ու ես չգիտէի, որ ինձ վիճակուած էր շատ մեծ գիւտ անել՝ տակնուվրայ անելով ուղեղիս մենթալ կառուցուածքները: ...Ամէն գիւտ բացառիկ է նախ գիւտարարի համար կամ միայն գիւտարարի համար» [Նոյն տեղում]: Վիպակի միւս հերոսների հանդէպ, մինչդեռ, նման վերաբերմունք չի նկատուում:

«Մտքերի տարափ». այսպէս կարելի է բնորոշել Ֆելիքս Բախչինեանի՝ բնագիրն սկսելու սովորոյթը: Իսկ սա նշանակում է, որ երկար կարելի է յամենալ այս խաղարկումների վրայ: Սակայն այսքանն արդէն բաւարար կը լինի՝ համարելու, որ «Հայրը» ստեղծագործութեան ընթերցման «նախադրանն» ենք, այսինքն՝ պատրաստ գնալու հեղինակային «գիւտի» ետեւից, որ այս անգամ բացւում է սիւժետային երկու, կամ եթէ կ'ուզէք, հեղինակին էլ հաշուած [Բախչինեան, 2023, 49], երեք տարբեր հանգրուաններով: Մի քիչ աւելի հաշուարկների մէջ խորանալու առումով պատումում հայրերի թիւը շատ աւելին կարող է լինել: Դիցուք եթէ դիմենք այս «հայրաբանութեան» ու սերունդների բախումի հետաքրքիր օրինակին, որտեղ իր որդին՝ «միջին սերունդը», «ամենադրամատիկը մեր երեքի մէջ», «ամենամեղքն է, որովհետեւ այդ նա պիտի հասկանայ ու հանդուրժի ե՛ւ ինձ, ե՛ւ իր որդուն» [Բախչինեան, 2023, 11]:

Թէ որքան քննութիւն կը բռնի հայրապատումի առաջարկուող մոդէլը, որ խորքի մէջ թերեւս դարձ է ի շրջանս իւր, այսինքն՝ Հայր Աստծոյ գաղափարի նորովի վերախաղարկում, ցոյց կը տայ ժամանակը: Եւ այս կրկնակի ապամիջականացումը Բախչինեանը կատարում է՝ հնարաւորինս բացատրելով իր կռուանները: Այսպէս, շարադրանքի ընթացքում նա փորձում է երեւան բերել հօր ու մօր տարբերութիւնը՝ մեկնելով ընդհանրականից, որը երջանկութեան զգացումն է: Բայց մի ոչ երկրորդական տարբերութեամբ. «Մայրերը երեխաներին ունենում ու մեծացնում են իրենց համար, իրենց երջանկութեան: Հայրերը... երեխային պատրաստում են երջանիկ լինելու հենց երեխայի համար, ոչ թէ իրենց» [Բախչինեան, 2023, 28]: Իսկ սրա մէջ, չի կարելի չհամաձայնել, ճշմարտութիւն կայ:

Ի հա՛րկէ, Բախչինեանը չի բարձրաձայնում, բայց ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել այն ներքին հակադրութիւն-երկխօսութիւնը, որ վարում է իր նախորդներից Աւետիք Իսահակեանի հետ, երբ վերջինս «մայրական գիրկը» համարում էր «սուրբ», իսկ հօրը յայտարարում մեղսաւոր («Իմ հայրը իմ դէմ մեղանչեց» [Իսահակեան, 1974, հ. 2, 59]): Ի դիմաց սրա՝

Բախչինեանը առնուազն պահանջում է «մօրը եւ հօրը նոյն պատուանդանին ու հաւասար հարթութեան վրայ դնել» [Բախչինեան, 2023, 29]:

Պայմանականօրէն առաջին՝ մեր օրերի հօր պատումն առաջ տանողը հեղինակային են է, որ թերեւս աւելի հաւաստի դարձնելու համար ասելիքը, կամ որ աւելի ճիշդ կը լինի ասել, ստուգելու համար իր դատողութիւնների ընկալումը փորձում է ինքնակենսագրական տարրեր մտցնել գեղարուեստական տարածք եւ իբրեւ լսող կողմ ընտրում է թոռանը (թէպէտ տեքստում նկատում է, որ ինքնակենսագրական տարր չպէտք է որոնել): Ինչո՞ւ իր դէպքում ոչ թէ տղային, այլ՝ թոռանը: Գիտակցականօրէն կամ ենթագիտակցաբար ընթերցողը փորձում է պատասխանը գտնել հենց իր խոստովանական տեքստում. «Յետադարձ հայեացքը սպանում է ինձ. ախր ես չեմ բռնել երեխաներիս ձեռքը, չեմ թողել աստիճաններից ընկնել, խաղալ կեղտոտ ջրափոսում... Ես ինչպէ՞ս եմ հաւատացել, որ մայրերն ամէն ինչ անում են հայրերից աւելի լաւ ու աւելի ճիշդ» [Բախչինեան, 2023, 49], որտեղ ինքը չի կարող համեմատուել իր բերած «օրինակելի» հայրերին:

Իսկ այդ օրինակելի հայրերի միջոցով բացւում է մի ամբողջ դաստիարակչական շղթայ, որ լի է մանկան հոգեբանութեան (երեխայի՝ աստիճաններով վազվզելու կամ ջրափոսում ցեխոտուելու տեսարանները), դաստիարակութեան մոդելների (հօր «անթոյլատրելի անտարբերութիւնը»), մարդկայնութեան դասերի (ուրիշի, օտար(ներ)ի երեխաների համար Տիգրան Աբովեանի «չտեսնուած» հայրութիւնը⁹) ցուցադրութեամբ:

Երկու պատումներ են մեր առջեւ (նկարիչներ Տիգրանի եւ Տիգրան Աբովեանի), որոնք առաջին հայեացքից չեն փոխլրացնում իրար իբրեւ սիւժետային մէկ միասնական կառոյց: Բայց կայ մի կարեւոր հանգամանք՝ հայրական տարբեր մոդելների խաղարկման հնարաւորութիւնը: Եթէ առաջինում իր (ընթերցողն ազատ է այս իր-ը կապելու կամ չկապելու հեղինակի կենսագրութեանը) եւ կենսաբանական հայր Տիգրանի միջոցով բերում է սերունդների երկխօսութիւնը, ապա երկրորդ հանգրուանը հեղինակին «պէտք է»՝ ընդլայնելու «Հայր» հասկացութեան կամ արքեոթիպի սահմանները՝ այս անգամ հասնելու համար «Հայր Աստծոյ», «տիրոջ, աղայի խորհրդանիշի» [Բախչինեան, 2023, 129] ըմբռնումին, որ հնարաւոր չէ անձնական սովորական պատմութեան միջոցով: Այսպիսով՝ մասնաւորից ընդհանուրին, կամ փոքրից մեծին հասնելու յանձնառութեամբ է թերեւս արդարացւում պատումների միջեւ ժամանակային խախտումը (առաջինի սիւժէն վերաբերում է մեր օրերին, երկրորդինը՝ 1985-ին):

Եւ այնուամենայնիւ, մեզ դժուար է թուում ստեղծագործութիւնն անուանել վէպ: Այս երկու պատումները միաւորողը ապամիֆականացման վերոնշեալ գաղափարն է: Այս դէպքում, եւ սա էլի կարող ենք նկատել հեղինակային կայուն նախասիրութիւն, ժանրային բնորոշումը կարող է լինել կամ վիպակը, կամ՝ խոհագրութիւնը, մանաւանդ եթէ նկատի առնենք նաեւ վերջին՝ «Երկրորդ պատուանդանը՝ առաջինից բարձր» գրութիւնը, որը մի կողմից ամբողջացնում է նիւթը, միւս կողմից ինքնուրոյն միաւորի իրաւունք ստանում:

«Հայրը» երկում ոճաւորման կարեւոր հնարանք է կրկնութիւնը: Թէպէտ եւ ընթերցողը լաւ գիտի Աստուածաշնչեան յայտնի շարակարգութիւնը, բայց հեղինակը չի զլանում եւս մէկ անգամ յիշեցնել-կրկնել. «Հայր Աստուած. որդի Աստուած, առաջին մարդը Ադամն էր, յետոյ միայն Եւան... Եւան նրա կողից էր... Առաջին երեխաները տղաներ էին, հայրեր...» [Բախչինեան, 2023, 48]: Բայց սա բաւարար չէ հեղինակի համար՝ յաղթահարելու անորոշութիւնը, «իմ մէջ բարձրացող հակառակութիւնը» [Բախչինեան, 2023, 49]: Ճանապարհը. պիտի կրկին կարդայ Աստուածաշունչը, եւ ոչ միայն. դրա կողքին Ղուբանը, վեղայական գրականութիւն, յունական դիցաբանութիւն: Արդէն գրքի վերոնշեալ վերջին էսսեում հեղինակը հաւաստում է, որ կատարել է ընթերցումները եւ իր խօսքը տանում է հոգեվերլուծաբան Կարլ Յունգի տեսութեան հիմնաւորումներով:

⁹ Դրուագի ընթերցումը յիշեցնում է Շիրվանզադէի «Որն է մայրը» պատմութեամբը:

Ի՞նչ է ուզում վերջապես հեղինակը. քանդե՞լ մայրական միջը. յամենայն դեպս այդպես է թույլ նրա յորդորից՝ «փոխել աշխարհի դրուածքը, աշխարհակարգը, մարդակարգը» [Բախչինեան, 2023, 143]: Մնացեալը ընթերցողի իմանալիքն է, որը եթէ անգամ անվերապահօրէն «չհաւատայ» հեղինակի դատումներին, գոնէ մտորելու առիթ հաստատ կ'ունենայ:

SUMMARY

The review is dedicated to Felix Bakhchinyan's novel "Father". There are references to the manifestation of intertextuality, dialogues with other artists, which is a stable preference for the writer and is also found in previous works. («Déjà Vu. Aleppo: Valley of Love and Death», "One Night in Ataturk's room" and others). An attempt is made to highlight the logic of the author's judgements about the archetype of the father, which is often based on the contrast of the mother figure. The features of the stylization of the work are also taken into account.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Բախչինեան Ֆ. «Հայրը» / վեպ, Երևան, «Գիտութիւն» հրատ., 2023, 148 էջ:
2. Ֆոսթեր Թոմաս Ս. Ինչպէս ընթերցել գրականութիւն պրոֆեսորի պէս / անգլերէնից թարգմանեց Աստղիկ Աթաբեկեանը, Երևան, Էդիթ Պրինտ, 2021, 272 էջ:
3. Իսահակեան Ա. Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, Հայաստան, 1974, 336 էջ: